ժողովների մէջ արծարծելով և շատ ու շատ խօսակցութեան առարկայ լինելով՝ փոխուեցաւ հերթապահութեան, որով և խաղաղացաւ ժողովուրդն, ըստ այսմ տուաւ քահանայից 15 յօդուածով կանոնք հերթապահութեան և այնպէս վերջացաւ ծխաբաժանութեան խնդիրն[1]:

Այս ամենի համար պարտաւորութեանս համաձայն յայտնեցի Վեհ. Կաթուղիկոսին ի գիտութիւն և կարեւորացն ի տնօրէնութիւն:

Թ. Մաղրասայ, Սաղիան և Դիրք գիւղերի դպրոցաց օժանդակութիւնն ըստ որում կախումն ունէր Բագուաբնակ գաւառացիներից, ուստի և առանձին առանձին Մատրասեցի, Դիրքեցի և Սաղիանցի Բագուաբնակ պարոններին հրաւիրեցի ինձ մօտ և բացատրելով խնդիրն և հասկացնելով իրենց գիւղերի դպրոցների դրութիւնը՝ խոստացան ամենայն սիրով օգնել ըստ կարողութեանցն ի պահանջել հարկին:

Իսկ Մէյսարի գիւղում դպրոց բանալու և պահելու համար որ ամենահարկաւորն էր՝ խօսեցի մեծապատիւ պ. Գրիգոր Թումայեանցի հետ և խնդրեցի բարերարել Մէյսարեցի ժողովրդոց դպրոցի բացմամբն: Նա խոստացաւ խնդիրս կատարել խորհրդակցութեամբ ընդ անդամոց խորհրդոյ Մարդասիրական ընկերութեանն[2]) և մեծայոյս եմ ըստ ամենայնի, որ պ. Թումայեանցն չի խնայել իւր բարերարութիւնն Մէյսարու ուսումնակարօտ երեխաներին՝ որով և Աստուծոյ օրհնութիւնը կ'վայելէ այն խոստմանը հաւատալով՝ որ Քրիստոս ասաց «Որ արբուսցէ միում ի փոքրկանցս բաժակ մի ջուր ցուրտ յանուն իմ. ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ զվարձն իւր»:

Ժ. Մի մեծ խնդիրն էլ ակարութեանս փարատիլն էր, որ Ջամախի գալուց հետէ ընկերացել էր ինձ:

---

[1]) Բագուայ հայոց ծխաբաժանութեան խնդիրն բոլորովին վերջացաւ 1893 թուին, եւ 2125 տուն ժողովուրդը 6 մասի բաժանեցաւ:

Այս մասին տես Բագուայ ստորագրութեան մէջ, ցերեկ

[2]) Մարդասիրական ընկերութիւնը իւր 1891 թուին ընդհանուր ժողովում որոշեց տալ Մէյսարու դպրոցին տարեկան 300 րուբլի, երբ ցէնզ ունեցող վարժապետ-քահանայ ունենայ: